



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«31» 03 2018թ.

No 06/3-1/16289-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 27.02.2018թ.

թիվ Պ-11 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքները, ԱԱՀ-ի հաշվարկման ու վճարման կարգը սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ բաժնով:

ՀՀ հարկային օրենսգրքի 276-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի, արտոնագրային հարկով հարկման օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետությունում իրականացվող՝ ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրումը,

- 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրում է համարվում բացառապես Հայաստանի Հանրապետության տարածքում ավտոբուս կամ միկրոավտոբուս համարվող տրանսպորտային միջոցներով իրականացվող ուղևորափոխադրումը, այդ թվում՝ ըստ նախնական պատվերի, ինչպես նաև ըստ նախնական պատվերի համապատասխան պայմանագրերի համաձայն իրականացվող ուղևորափոխադրումը,

- 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ արտոնագրային հարկով հարկման օբյեկտ չեն համարվում՝ Հայաստանի Հանրապետության տարածքից սկսվող և Հայաստանի Հանրապետության տարածքում չավարտվող կամ Հայաստանի Հանրապետության

տարածքից դուրս սկսվող և Հայաստանի Հանրապետության տարածքում ավարտվող երթուղիներով իրականացվող ավտոբուսներով կամ միկրոավտոբուսներով ուղևորափոխադրումը:

ՀՀ հարկային օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ միևնույն հաշվետու ժամանակաշրջանում տարբեր բնակավայրերում կամ տարբեր բնակավայրերի միջև նույն թեթև մարդատար մեքենայով, ավտոբուսով կամ միկրոավտոբուսով ուղևորափոխադրում իրականացնելու դեպքում արտոնագրային հարկի հաշվարկման համար կիրառվում է տվյալ բնակավայրերի համար նույն հոդվածի 1-ին մասով սահմանված արտոնագրային հարկի ամսական դրույքաչափերից առավելագույնը:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկ վճարողների շահութահարկով հարկման, ավելացված արժեքի հարկի հաշվարկման, վճարման և հաշվետվությունների ներկայացման հետ կապված հարցերը կանոնակարգվում են համապատասխան գաղտնի հուշագրերով: Հուշագրի դրույթներին առավել մանրամասն ծանոթանալու համար առաջարկում ենք այցելել կամ գրավոր դիմել հարկային մարմնի՝ Ձեզ սպասարկող համապատասխան ստորաբաժանում:

Ելնելով վերոնշյալից՝ հայտնում ենք, որ.

1) ՀՀ-ում սկսվող և Արցախի Հանրապետությունում ավարտվող (և հակառակը) բեռնափոխադրումները համարվում են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ: ԱԱՀ վճարող համարվողի կողմից իրականացվող բեռնափոխադրումների մասով կիրառվում է ԱԱՀ 20% դրույքաչափ: Այդ բեռնափոխադրումների մասով կիրառելի չեն ՀՀ հարկային օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթները (ԱԱՀ-ի 0% դրույքաչափ չի կիրառվում),

2) ՀՀ-ում հաշվառված հարկ վճարողների կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետությունից դեպի Արցախի Հանրապետություն (կամ հակառակը) ավտոբուսով և (կամ) միկրոավտոբուսով ուղևորափոխադրումները ենթակա են հարկման արտոնագրային հարկով՝ օրենսգրքի 57-րդ գլխով սահմանված կարգով (դրույքաչափերի առումով հիմք ընդունելով օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները):

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ